



ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ՍՏՈՐՋՐՅԱ ՏԱՐԱԾՔԻ
ԳԻՏԱԿԱԶԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ
Հունիսի 21-30, 2010թ.**

Սևանա լճի ստորջրյա տարածքի գիտահետազոտական առաքելությունը կիրականացվի 2010թ.-ի հունիսի 21-ից 30-ը ընկած ժամանակահատվածում: Ֆրանս-հայկական այս առաքելությունը կիրականացվի ծրագրի երկու հեղինակների՝ Կլոդ Թուլումձյանի (նախաձեռնող) և Ստեֆան Կոջայանի (օգնական) կողմից, ինչպես նաև ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիային կից հետազոտական կենտրոնների և պետական մարմինների հետ համագործակցությամբ, որոնք աշխատում են Սևանա լճին առնչվող հարցերի շուրջ:

Ստորջրյա այս ուսումնասիրությունների նպատակն է՝ գիտնականների համար ձեռք բերել մնուշներ (ջուր, գազ, նստվածքներ, տիղմ), տեսաֆիլմեր և լուսանկարներ, իրականացնել ֆաունայի հաշվառումներ (ձկներ, խեցգետիններ) և ֆլորայի նկարագրություն, ձեռք բերել տեղագրական տվյալներ, որոնք կարող են ծառայել ստորջրյա հնագիտական պեղումների կամ երկրաբանական ուսումնասիրությունների համար, բացահայտել ստորջրյա քարանձավներ, իրականացնել հոսանքների չափումներ և այլն:

Ծրագիրը կապված է հետևյալ բնագավառների հետ՝ հիդրոերկրաբանություն և ձկնաբուծություն, երկրաբանական գիտություններ, էկոլոգիական և նոստրային ուսումնասիրություններ, հնագիտություն և ազգագրություն, քարանձավագիտություն և պատմություն, և համագործակցում է « Այաս » ծովային հետազոտությունների ակումբի հետ՝ Կարեն Բալայանի ղեկավարությամբ:

Բոլոր այս տարրերի ամբողջությունը հետազոտումների նպատակով կտրամադրվեն հայ գիտնականներին, որոնց արդյունքները անմիջականորեն կապված են այս քաղցրահամ ջրի պահեստի էկոլոգիական հավասարակշռության հետ, որն ունի այդպիսի ռազմավարական կարևորություն և տարածքային նշանակություն:

Բացի այդ, ձեռք բերված տեղեկությունները հնարավորություն կտան բարելավել Սևանա լճի վերաբերյալ տեղի բնակիչների տեղեկացվածությունը՝ համապատասխանացված հաղորդումների և ծանուցումների միջոցով:

Լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել կից ներկայացված հավելվածներում :

Անհրաժեշտ տեղեկությունների համար կարող եք կապնվել՝

- Արայիկ Ավաքյան (+374 093.13.19.50
- Ստեֆան Կոջայան (+374) 098.42.39.59 – stephane.kojayan@hotmail.fr
- Կլոդ Թուլումձյան (+374) 077.105.109 – touloumdjian.cl@wanadoo.fr

* * *